**Արձանագրություն N 4**
**«ԿՄԹՀ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

գ.Թեղենիք 13 օգոստոսի 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Բաղդասարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Մխիթարյան,Մ.Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

**1. Հանձնաժողովի նիստի օրակարգը**
**(Մ.Բաղդասարյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Բանակցությունների կազմակերպման մասին
3. Գնահատման մասին
4. Հարցում կատարելու մասին
5. Գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**2. Բանակցությունների կազմակերպման մասին**
**(Մ.Բաղդասարյան)**

Ընդունել ի գիտություն, քանի որ սույն ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի հանձնաժողովը որոշեց.
ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ վարելու համար նիստ հրավիրել ս.թ. 13.08.2019թ-ին ժամը 12:00-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:
Սահմանված ժամկետում գնային նոր առաջարկներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***3.*** **Գնահատման մասին**
**(Մ.Բաղդասարյան)**

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:
Առաջարկված հայտերի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| | ***Առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝*** | |
| 1 | <<ՀԱԲ-ԳԱԳ ՇԻՆ>> ՍՊԸ | 1 |
| | ***Երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել՝*** | |
| 1 | <<Մ ԲՈՒԱՏ>> ՍՊԸ | 1 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**4. Հարցում կատարելու մասին**
**(Մ.Բաղդասարյան)**

«ԿՄԹՀ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.12-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

ProTender©
www.protender.am

ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում 7.12-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am,karine_sargsyan@taxservice.am,gayane_antonyan@taxservice.am,,procurement @minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

5. ***Գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին***
(Մ.Բաղդասարյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

6. ***Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին***
(Մ.Բաղդասարյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «ԿՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-19/1» գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը Ծաղկունքի համայնքապետարան, ՀՀ Կոտայքի մարզ, գ.Ծաղկունք, 3 փողոց 1շենք հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Բաղդասարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Մխիթարյան

Մ.Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

ProTender©
www.protender.am